Երկրորդ ընթերցում

լրամշակված նախագիծ

Կ-784-27.02.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.1-ին հոդվածով.

«**Հոդված 31.1. Հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեությանը**

1. Հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել հասարակական վերահսկողություն ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեության նկատմամբ: Սույն հոդվածի իմաստով հասարակական վերահսկողությունը ներառում է ապաստան հայցողների կենսաապահովման պայմանների, ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների պահպանման և ապաստան հայցողների այլ իրավունքների ապահովման նկատմամբ վերահսկողական գործառույթները:

2. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողությունն իրականացվում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հաստատած՝ մրցութային կարգով ընտրված, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված հասարակական դիտորդների խմբի միջոցով:

3. Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը:

4. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և

իրավասությունների շրջանակը սահմանում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը ընդունում է սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների եւ ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքը ~~(այսուհետ՝ օրենք)~~ լրացնել հետեւյալ բովանդակությամբ 31.1-ին հոդվածով.

«Հոդված 31.1. Հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեությանը

1. Հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել հասարակական վերահսկողություն ~~ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի~~ **ժամանակավոր տեղավորման կենտրոնի** գործունեության նկատմամբ: Սույն հոդվածի իմաստով հասարակական վերահսկողությունը ներառում է ապաստան հայցողների կենսաապահովման պայմանների, ~~ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում~~ **ժամանակավոր տեղավորման կենտրոնում** բնակության ներքին կարգապահական կանոնների

պահպանման եւ ապաստան հայցողների այլ իրավունքների ապահովման նկատմամբ վերահսկողական գործառույթները:

2. ~~Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում~~ **<u>Ժամանակավոր տեղավորման կենտրոնում</u>** հասարակական վերահսկողությունն իրականացվում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հաստատած՝ մրցութային կարգով ընտրված, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված հասարակական դիտորդների խմբի միջոցով:

3. Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը:

4. ~~Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում~~ **<u>Ժամանակավոր տեղավորման կենտրոնում</u>** հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաեւ հասարակական դիտորդների խմբի կազմը եւ իրավասությունների շրջանակը սահմանում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված 2. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ.~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը ընդունում է սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ՝ (Կ-784-27.02.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ օրենք)» ձեւակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքում լրացվող նոր 31.1-ին հոդվածում կիրառվում է «ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն» ձեւակերպումը: Հարկ ենք համարում նշել, որ «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում «ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն» երկար արտահայտության համար սահմանվել է կիրառելիության կրճատ տարբերակ, այն է. «ժամանակավոր տեղավորման կենտրոն»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:»: Ուստի առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 31.1-ին հոդվածում «ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն» բառերը և համապատասխան հոլովվածները փոխարինվել է «ժամանակավոր տեղավորման կենտրոն» բառերով՝ համապատասխան հոլովվածներով:		
3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: